

պականաբնակ հերձուածոյն նեստորի¹ անիծելոյ, բռնահարեա՛ զկամացն Աստուծոյ իբրեւ հանդիսի նահատակ, կոչեա՛ քեզ ի թիկունս աւզնականութեան զմարմնացեալն ի մէնջ ճշմարիտ Աստուած Յիսուս Քրիստոս՝ առաջնորդ² ունելով զՀայր Արարիչ եւ անեղ անքնին³ յարարածոց, որպէսզի Հոգւովն⁴ Սրբով, որ է ուղեկից⁵, սկզբնեալ Հնթերցուածոց մեկնումն արարեալ բանաստեղծեսցես, որպէսզի թարգմանեսցես զամենայն կարգ ընթերցարանիս մերոյ, մանաւանդ զխորհրդածութեան ընթերցուածսն շորից յարմարմանցն, որ զանց առնէ զՊասեքին եւ սկզբնեալ Առաջնորդան հան-

դերձ: Իսկ դու ինքնին աշխատելով մատենագրեսցես, եւ ի լուր ականջաց բերելով տգիտաց ծանուցես զայս իր խորհրդոյ, որ զանազանեալ աստուածասքանչ խորհուրդ Տեառն բարձրելոյ:

Եւ ընդ միոյ սակաւուդ վարձս ընկալցի՛ս յԱստուծոյ մերմէ բիրապատիկ հազարաւորեալ, բիրաբաշխ եւ մշտալցոյց: Եւ յանգրաւ ուրախութիւնսն⁶ երախտաւորեալ, ծաղկաւէտ շահաւորեալ, փառաբ վայելելով⁷ բերկրեսչի՛ր ի Քրիստոս Յիսուս⁸, յահեղ փառաց Յայտնութեան նորա, որում⁹ փառք յաւիտեանս. ամէ՛ն:

1 m նեստորի
2 i յատաջնորդ
3 ai անքննիս փխ անքննիս (i,m)
4 i, Հոգովն

5 ai ուղեկից, i,m ուղեկից փխ ուղեկից (վերականգնումը՝ Հ. Ն. Պողարեանի)
6 a ուրախութեան փխ ուրախութիւնսն (ii,m)
7 m վայելով փխ վայելելով (aii,
8 m Քրիստոս փխ Յիսուս (aii,) (կրկն.)
9 m յորում փխ որում (aii,)

ԱՂՈՒԱՆԻՑ ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԾՈՒՐՋ

Արման Եղիազարեան

Թ դ. Աղուանից երկրամասում տեղի ունեցող իրադարձութիւնները յանգեցրեցին Աղուանից կոչուող թագաւորութեան հիմնադրմանը: Այդ թագաւորութեան ստեղծման պատմութեան, ինչպէս նաեւ այնտեղ իշխողների ազգային ու տոհմային պատկանելութեան հարցի քննութիւնը խիստ արդիական է, քանի որ այդ հարցերում նոյնիսկ Հայ ուսումնասիրողները միասնական կարծիք չունեն, ինչն էլ հնարաւորութիւն է տալիս ազդեցական պատմագրութեանը, շատ դէպքերում յենուելով հէնց հայ ուսումնասիրողների աշխատութիւնների վրայ, նենգափոխելու պատմական իրականութիւնը:

Աղուանից թագաւորութեան ստեղծումը սերտորէն կապուած է Հայոց Արեւելից կողմանց իշխաններից Սահլ Սմբատեանի գործունէութեան հետ:

Համաձայն Թովմայ Արծրունու մի տեղեկութեան, որն ուսումնասիրողների կողմից տարբեր մեկնաբանութիւններ է ստացել, Արաբական խալիֆայութեան Բուզա զօրավարի կողմից գերեվարուած Հայ իշխանների թւում էր «...Սահլ Սմբատայ որդի¹, Շաքեոյ տէր, որ զԲաբանն կալաւ»²:

Հայոց Արեւելից կողմերի պատմիչ Մովսէս Դասխուրանցին (գրականութեան մէջ կոչուած նաեւ Կաղանկատուացի) Սմբատի որդի Սահլին անուանում է «արի եւ շքեղատեսակն Սահլ Սմբատեան Եռանշահիկն տէր»³, Եռանշահիկների կամ Առանշահիկների տոհմը՝ «զնախնական ազգն Հայկազնեանց»⁴, իսկ իրենց՝ Եռանշահիկներին՝ «Հայկազանց արք»⁵: Այնուհետեւ հեղինակը Սահլի մասին գրում է, որ նա «յարքայից Զարմիրհական տոհմէն էր»⁶: 837 թ. Սահլը Խուրամեան շարժման առաջնորդ Բաբեկին ձերբակալելու համար արաբներից իշխանութիւն է ստանում «ի վերայ Հայոց, Վրաց եւ Աղուանից»⁷: Գրականութեան մէջ ընդունուած է Համարել, որ այդ իշխանութիւնը հօրից ժառանգում է «տերանց տէրն Յովհաննէս, որ Հայոց, Վրաց եւ Աղուանից եղեւ տէր»⁸: Այնուհետեւ Համամ անունով իշխանը «զկործանեալ թագաւորութիւն տանս Աղուանից նորոգեաց», ընդ որում՝ ըստ Մովսէս Դասխուրանցու՝ «որպէս Աշոտ Բագրատունի՝ զՀայոց թագաւորութիւնն. այսք ի միում ժամանակի գործեցան»⁹:

1, 1907, القاهرة, 1, البلدان, كتاب فتوح البلدان, 317-332 ص, بلانزي, بتاريخ, 5, بيروت, ص 240-245, تاريخ الطبري, 4, بيروت, 2, بيروت, 1970, ص 577-579, ابن الاثير, الكامل في تاريخ يعقوبي,
2 Թովմայ Արծրունի եւ Անանուն, էջ 296-298:
3 Մովսէս Կաղանկատուացի, էջ 326:
4 Նոյն տեղում, էջ 172:
5 Նոյն տեղում, էջ 338:
6 Նոյն տեղում, էջ 330:
7 Նոյն տեղում, էջ 330:
8 Նոյն տեղում, էջ 330-331:
9 Նոյն տեղում, էջ 335:

1 Հայկական սկզբնաղբիւրներում Սահլը կոչւում է «Սահլ Սմբատայ որդի» (Թովմայ Արծրունի եւ Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, բնագիրը Վ. Վարդանեանի, Երեւան, 1985, էջ 298. Հասցումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վեներիկ, 1862, էջ 86). «Սահլ Սմբատեան Եռանշահիկ» (Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը եւ ներածութիւնը Վ. Առաքելեանի, Երեւան, 1983, էջ 326), իսկ արաբական աղբիւրներում՝ «Սահլ իբն Սնբատ» (248 Վ

Միքայել Ասորու՝ Բաբելին ձերբակալելու վերաբերեալ յիշատակութեան մէջ՝ Սահլն անուանուած է Սահակ («Սահակ իշխանն Հայկազուն»)՝¹⁰ ինչից կարելի է եզրակացնել, որ Սահլը հայ իշխանի անուան արաբական ձեւն է, իսկ նրա հայկական անունը եղել է Սահակ¹¹:

Ուսումնասիրողներից ոմանք (Ն. Ադոնց եւ այլք) Ադոնանից կամ Շաքիի կոչուած իշխանութեան ստեղծման համար հիմնուած են «Քարթլիս ցխովրեբա»-ի տեղեկութիւնների վրայ: Այդ իշխանութեան առաջացման մասին «Քարթլիս ցխովրեբա»-ն հաղորդում է, որ 774-775 թթ. ապստամբութիւնից յետոյ «եկին ի Տարօնոյ եղբայրք երեք (սրանք Ատրնբրսեհ Կոյր կոչուող իշխանի եղբորորդիներն էին, որին Ն. Ադոնցը նոյնացնում է կուրացուած հայոց Աշոտ Բագրատունի իշխանին (732-748)¹² - Ա. Ե.) եւ բնակեցան մինչեւ ց Գաղզաղ (կամ Գուլգուլ, ներկայումս՝ Համանուն գիւղ թելաւ քաղաքի մօտակայքում - Ա. Ե.) հրամանաւ Արչիլին»¹³: Ապա վրացական աղբիւրն ակելացնում է, որ այդ «երեք եղբայրները... Տարօնից էին եկել Շաքի ու հաստատուել այնտեղ Արչիլի հրամանով, քանի որ Կովկասի բոլոր ծայրերը Ռանի¹⁴ կողմից անբնակ էին դարձել... եւ երեք եղբայրները հաստա-

10 Տե՛ս Միքայել Ասորի, *Ժամանակագրութիւն*, Երուսաղէմ, 1879, էջ 365:
 11 Cyrille Toumanoff, *Manuel de Généalogie et de Chronologie pour le Caucase chrétien (Arménie, Géorgie, Albanie)*, ? 1976, p. 69-70.
 12 Ադոնց Ն., *Բագրատունեաց փառքը*, տե՛ս «Պատմական ուսումնասիրութիւններ», Պարիս, 1948, էջ 98. տե՛ս նաեւ Տէր-Ղեւոնդեան Ա., «Հայոց իշխանը» արաբական տիրապետութեան ժամանակաշրջանում, ՊԲՀ, 1964, թիւ 2, էջ 130:
 13 *Քարթլիս ցխովրեբայի* կամ վրաց պատմութեան թիւ հայերէն թարգմանութիւնը լոյս ընծայեց Ի. Արուստեան, Թիֆլիս, 1953, էջ 199:
 14 Կամ Առան: Խօսքը Ադուանը կոչուած երկրամասի մասին է:

տուեցին մինչեւ Գուլգուլ (Գուլգուլ¹⁵)»¹⁶:

Անհրաժեշտ է անդրադառնալ նաեւ Վախուշտի Բագրատիոնու խնդրոյ առարկային վերաբերող հաղորդմանը: Այն խճճուած է եւ, մեր կարծիքով, ուսումնասիրողների կողմից սխալ է հասկացուել կամ էլ յարմարեցուել է «Քարթլիս ցխովրեբա»-ի վկայութեանը: Այն, ընդհանուր առմամբ, ունի հետեւեալ բովանդակութիւնը: Առասպելական էրոսը երկու Ալազան գետերի (իմա՝ Իորի եւ Ալազան գետերը - Ա. Ե.) ջրկիցի մօտակայքում կառուցել է Հերթի (Հերթ) կոչուող քաղաքը, որը հետագայում կոչուեց Խորանթա: Նոյնպէս առասպելական Քարթլոսի կողմից նրան տրուած իշխանութիւնը, որը նրա անունից կոչուեց Հերթ, տարածուած էր Իորի եւ Ալազան գետերի ջրկիցից մինչեւ Տկետա քաղաքը՝ Թելաւի մօտակայքում՝ ընդգրկելով այդ գետերի միջագետքը¹⁷: Այսինքն՝ Հերթը նոյնանում է Կամբեճանին: Հետագայում վրացական Փառնաւազ թագաւորից իշխանութիւն ստացած բոլոր իշխանները եւ նրանց սերունդները մշտապէս ենթարկուած էին վրաց թագաւորներին: Նրանցից էր Ը դ. սկզբին Հերթում իշխող Ադարնասէ (իմա՝ Ատրնբրսեհ - Ա. Ե.) իշխանը: Անհրաժեշտ է մէջ բերել Վախուշտի Բագրատիոնու՝ Ատրնբրսեհին վերաբերող վկայութիւնը, որպէսզի ցոյց տրուի ուսումնասիրողների սխալն այս

15 Ներկայումս համանուն գիւղ կայ Թելաւ քաղաքի մօտակայքում (տե՛ս Карта Кавказского края с показанием густоты армянского населения, издание Бакинского Армянского Культурного Союза, Баку, 1908):
 16 Տե՛ս Մելիքսեթ-Բեկ Լ., *Վրաց աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին*, հտ. Ա, Երեւան, 1934, էջ 196:
 17 Տե՛ս Вахушти Багратиони, *История царства Грузинского*, перевод Н. Накашидзе, Тбилиси, 1976, էջ 125. տե՛ս նաեւ Лордкипанидзе М., *Возникновение новых феодальных государств*. - Очерки истории Грузии, т. II, Тбилиси, 1988, էջ 273:

հարցում. «...յետոյ Հերթի իշխան դարձաւ Ադարնասէն...: Եւ նրանք (իմայ վրաց Փառնաւազ թագաւորից իշխանութիւն ստացած բոլոր իշխանները - Ա. Ե.) մշտապէս ենթարկուած եւ ծառայում էին վրացական թագաւորներին: ...Իսկ Հերթը նուաճեցին Ադարնասէ Կոյրի եղբորորդիները, որոնք խարանել էին իրենց հօրեղբոր աչքերը: Եւ նուիրեց նրան տառապեալ Արչիլը Շակիխին ու Աբուխոսրոյ կնոջը: Եւ նուաճեցին որդիները նրա [հորեղբոր] Շակիխից մինչեւ Գուլգուլայ եւ վրաց իշխանաց իշխան Ջուանչերի մահից յետոյ տիրեցին ողջ Հերթին եւ թագաւորներ կոչուեցին...: Քրիստոսի 787 եւ վրացական 7 թուականին մահացաւ իշխանաց իշխան Ջուանչերը: ...Հէնց այդ ժամանակ Ադարնասէի եղբորորդիները նուաճեցին Հերթը...»:՝¹⁸ Ի՞նչ ենք տեսնում: Վրաց աղբիւրը հաղորդույ՞ է, թէ Ատրնբրսեհը իշխում էր Հերթում եւ միւս թագաւորների հետ միասին հաւատարիմ էր վրացական թագաւորներին: Այնուհետեւ տեղեկացնելով Ատրնբրսեհ Կոյրի եղբորորդիների կողմից Հերթի նուաճման մասին, գրում է, թէ տառապեալ Արչիլը, որն, ըստ նոյն այդ աղբիւրի, իշխել է 668-718 թթ., «նրան» (՝) նուիրեց Շաքի քաղաքը եւ կնութեան տուեց Աբուխոսրոյին: Անկասկած, «նրան» ասելով, վրաց աղբիւրը նկատի ունի Ատրնբրսեհին: Իսկ ինչ վերաբերում է՝ «իսկ Հերթը նուաճեցին Ադարնասէ Կոյրի եղբորորդիները, որոնք խարանել էին իրենց հօրեղբոր աչքերը» տեղեկութեանը, ապա այն, դատելով վերն արուած պարզաբանումից, Վախուշտի Բագրատիո-

նու կողմից կատարուած ընդմիջարկութիւնն է: Խնդիրն այն է, որ Ատրնբրսեհ Կոյրի եղբորորդիների հաստատումը Հերթում եւ Շաքիում, ըստ Վախուշտու, տեղի է ունեցել 787 թ. յետոյ, իսկ Արչիլը իշխել է 668-718 թթ.¹⁹, այսինքն՝ Վախուշտու հաղորդումը Շաքին նուիրելու մասին պէտք է վերաբերի ոչ թէ Ատրնբրսեհ Կոյրի եղբորորդիներին, այլ Ատրնբրսեհ իշխանին, որն Արչիլի ժամանակակիցն էր: Իսկ «եւ նուաճեցին որդիները նրա [հորեղբոր] Շակիխից մինչեւ Գուլգուլայ եւ վրաց իշխանաց իշխան Ջուանչերի մահից յետոյ տիրեցին ողջ Հերթին եւ թագաւորներ կոչուեցին» հաստուածը, դատելով մեր վերը կատարած քննութիւնից, անշուշտ, պէտք է վերաբերի Ատրնբրսեհ Կոյրի եղբորորդիներին, այսինքն՝ այն պէտք է սրբագրել «եւ նուաճեցին [Ատրնբրսեհ Կոյրի եղբոր] որդիները նրա [հորեղբոր] Շակիխից մինչեւ Գուլգուլայ եւ վրաց իշխանաց իշխան Ջուանչերի մահից յետոյ տիրեցին ողջ Հերթին եւ թագաւորներ կոչուեցին»: Դրա ապացոյցն է նաեւ վրա-

19 Նոյն տեղում: Կարծիք է յայտնուել, թէ Ջուանչեր պատմիչի տեղեկութիւններից կարելի է եզրակացնել, որ Արչիլի ժամանակակիցն է եղել Ասիմ ուստիկանը (տե՛ս Мусхелишвили Д., *Крепость Уджарма*, Тбилиси, 1966, էջ 94-95), որը իշխել է 744 թ. (տե՛ս Тер-Гевондян А., *Армения и Арабский халифат*, Ереван, 1977, էջ 273), սակայն դա սխալ տեսակետ է, քանի որ Ջուանչերի յիշատակած Ասիմը եղել է դուաճան վրացական իշխան՝ Գարդամբէլ սկզբնական անունով, այլ ոչ թէ արաբ ուստիկան (տե՛ս Ջուանչերի պատմիչի *համառոտ պատմութիւն վրաց*, Վեւեթիկ, 1884, էջ 103): Ն. Ադոնցը, յենուելով Մարկուարտի եւ Բրոսսէի տեսակետների վրայ, փորձում է Արչիլի իշխանութեան շրջանը հասցնել մինչեւ Ը դ. վերջերը (տե՛ս Ադոնց Ն., *Աշ. աշխ.*, էջ 99-100): Սակայն, նա հաշուի չի առնում Ջուանչերի այն տեղեկութիւնը, որտեղ Արչիլն ասում է. «Թորժամ էանց ընդ երկիրս մեր Հերակլ՝ տղայ էի ես» (Ջուանչեր, էջ 103): Այս տեղեկութիւնը խօսում է Վախուշտի Բագրատիոնու հաղորդման օգտին, ըստ որի Բիզանդիայի Հերակլ կայսեր (610-641) օրօք մասնակ եղած Արչիլն իշխել է Ը դ. վերջին եւ Ը դ. սկզբին:

18 Տե՛ս Вахушти Багратиони, *Աշ. աշխ.*, էջ 125-126: Ծաքիի, մինչեւ Սահլի՝ դրան տեր դառնալու ժամանակների պատմութեան (այսինքն՝ մինչեւ IX դ. 30-ական թթ. կէտերը) քննութիւնը դուրս է մեր ուսումնասիրութեան շրջանակներից: Միայն Աշեքը, որ այդ խնդրին մանրամասնօրէն անդրադարձել է Ն. Ադոնցը (տե՛ս Ադոնց Ն., *Աշ. աշխ.*, էջ 93-125):

ցական հեղինակի վերոյիշեալ հաղորդումը, որ «հէնց այդ ժամանակ (իմա՛ վրացական իշխան Ջուանշերի մահից յետոյ (787 թ.) - Ա. Ե.) Աղարնասէի եղբորորդիները նուաճեցին Հերեթը»: Վախուշտի Բագրատինին հաւաստում է, որ ժ. դ. առաջին կէսին (սկսած 910 թ.) Հերեթում իշխում էր Ատրնեբսեհ անունը կրող մի թագաւոր (ըստ որոշ ուսումնասիրողների՝ նա Սահլի թոռնորդին էր, որի մասին կը խօսենք ստորեւ), որը, սակայն, Կախեթի իշխանութեան եւ Տփղիսի ամիրայի թշնամական գործողութիւնների հետեւանքով վախից իրեն այլեւս թագաւոր չէր կոչուած: Կախեթի Կվիրիկէ իշխանը 915 թ. կազմակերպեց Աբխազիայի թագաւոր Կոստանդինի արշաւանքն Ատրնեբսեհի իշխանութեան դէմ: Արշաւանքը զգալի արդիւնքներ չտուեց, եւ նրանք հաշտութիւն կնքեցին²⁰: Ատրնեբսեհն իր որդի Իշխանիկին (կամ Իշխանակ)²¹ ամուսնացրեց վրաց իշխանաց իշխան Գուրգէնի քրոջ՝ Դինարի հետ: Մինչեւ Իշխանակը Հերեթի բնակչութիւնը, սկսած Կասրէի (իմա՛ Խոսրով Անուշիրուան (531-579) - Ա. Ե.)²² ժամանակներից, հերձուածող էր (իմա՛ հայադաւան- Ա. Ե.), որը վերացրեց Դինարը: Երբ մահացաւ Իշխանակը, մնաց միայն Դինար թագուհին, եւ քանի որ վերջիններս ժառանգ չունէին, վրաց թագաւոր Բագրատը նուաճեց Հերեթը՝ Դինարի փոխարէն նշա-

նակելով այլ իշխանի²³: Ինչպէս տեսնում ենք, վրացական աղբիւրների տեղեկութիւնները հակասական են եւ խնդրի լուծման համար հիմք ծառայել չեն կարող:

Թւում է, թէ Վախուշտին, որն օգտուել է «Քարթլիս ցլոժրեբա»-ի տեղեկութիւններից, որոշ շտկումներ է մտցնում դրա իշխալ հաղորդման մէջ: Եթէ վերջինս նշում է, թէ Տարօնից եկած Ատրնեբսեհ Կոյրի եղբորորդիները Շաքիում հաստատուել էին Արչիլի հրամանով, ապա Վախուշտին տեղեկացնում է, թէ նրանք պարզապէս եկել ու նուաճել են Հերեթը Արչիլի մահից շատ տարիներ յետոյ: Բացի այդ, ըստ Վախուշտու, Արչիլը Շաքին նուիրել է Ատրնեբսեհ իշխանին: Արդէն ցոյց տուեցինք, որ Արչիլի եւ Ատրնեբսեհ Կոյրի եղբորորդիների՝ միեւնոյն ժամանակաշրջանում յիշատակութիւնը սխալ է: Ընդգծենք նաեւ, որ վրացական աղբիւրները Շաքիի իշխանական տան ծագման վերաբերեալ հաղորդումներում Սահլ իշխանի մասին բոլորովին չեն խօսում:

Արաբ աշխարհագէտ Մասուդին վկայում է, որ ժ. դ. սկզբին Շաքիում թագաւորում էր «Աղարնարսեհ իբն Համամը» (իմա՛ Համամի որդի Ատրնեբսեհ - Ա. Ե.): Վերջինիս թագաւորութիւնը տարածուած էր Ծանարների երկրի (աս-Սանարիա)²⁴ եւ Կապադակի (Կաբալա)²⁵ միջեւ²⁶:

Ատրնեբսեհի որդի Իշխանակին յիշատակում է Իբն Հաուկալը: Խօսելով Հայաստանից ու Այսրկովկասեան երկրներից արաբների կողմից գանձուող հարկերի մա-

սին՝ արաբ հեղինակը հարկատուների թւում յիշատակում է Շաքիի տէր (սահիբ) Իշխանիկին (իմա՛ Իշխանիկ - Ա. Ե.), որն այլ կերպ կոչուած էր Աբու Աբդ ալ Մալիք²⁷:

Սմբատի որդի Սահլ իշխանի եւ նրան պատկանող Շաքի քաղաքի մասին արտայայտուել են բազմաթիւ տեսակէտներ: Աղբիւրների պատմաբան Ջ. Բուսիաթովը փորձում է ապացուցել, թէ Սահլին պատկանող Շաքի քաղաքը ոչ մի կապ չունի Կուր գետի ձախափնեակի հետ, որտեղ գտնուած է Շաքի-Նուխին: Ըստ նրա՝ այն Շաքին, որտեղ իշխում էր Սահլը²⁸, համապատասխանում է ներկայիս Շաքի «մեծ գիւղին՝ Բագարչայ գետի ձախ ափին, Դարուազաթեփէ լեռան վրայ»²⁹: Այդ Շաքին գտնուած է Գորիս քաղաքից շուրջ 38 կմ դէպի հիւսիս-արեւմուտք³⁰: Որպէս ապացոյց իր տեսակէտի նա սկզբում մէջ է բերում ադ. Դինաւարի պատմիչի այն տեղեկութիւնը, թէ՛ 837 թ. Սմբատի որդի Սահլ իշխանը տիրում էր Երասխ գետի առափնեայ շրջաններին³¹: Այս փաստարկն, ինքնըստինքեան, նշուած նպատակի իրականացման համար բաւական թոյլ լինելով, Ջ. Բուսիաթովին մղել է նոր «փաստերի» փնտրտուքի, ուստի եւ զարմանալի չէ աղբիւրների հեղինակի աշխատութեան մէջ այնպիսի հաղորդումների մէջբերումը, որոնք կրկին ու կրկին հաւաստում են, որ նա պարզապէս փորձում է նենգափոխել պատմական իրականութիւնը: Նրա վկայակոչած միւս հեղինակը Տաբարին է, որը,

պատմելով Բաղդ ամրոցի³² անկումից յետոյ Խուրամեան շարժման առաջնորդ Բաբեկի փախուստի մասին, հաղորդում է, որ նա փորձեց ապաստանել Բիւզանդիայում, դէպի ուր ճանապարհը, ըստ Ջ. Բուսիաթովի, անցնում էր Սահլի տիրոջներով՝ Շաքիով, իսկ այնուհետեւ Սիւնիքով³³: Ջ. Բուսիաթովն ընդհանրապէս մէջ է բերում արաբ պատմիչների տեղեկութիւնները (հիմնականում՝ կապուած Սահլի կողմից Բաբեկի ձերբակալման հետ) այն մասին, որ Երասխի առափնեայ շրջանները պատկանում էին Սահլին³⁴: Պարզ է, որ այդ կերպ «հարազատացնելով» Սահլին Հայոց Արեւելից կողմերին եւ Սիւնիքի հարաւային շրջաններին, ինչպէս նաեւ Շաքի գիւղին՝ աղբիւրների պատմաբանը ցանկանում է «օտարացնել» նրան Շաքի-Նուխից:

Մինչդեռ Դինաւարիի երկում կարդում ենք, որ Բաբեկը «փախաւ Հայաստան՝ անցնելով Արաքս գետը եւ ուղղուեց դէպի Ռում: Երբ նա անցաւ Արաքս գետը, նրա մօտ եկաւ նահանգի կառավարիչ Սմբատի որդի Սահլը» եւ այլն³⁵: Ինչպէս

20 Вахушти Багратиони, Գ. 2, աշխ., էջ 127:

21 Իշխանակի՝ Ատրնեբսեհի որդի եւ Համամ Բարեպաշտ արքայի թոռ լինելու փաստը արձանագրում է Անանիա Մոկացի կաթողիկոսը (տե՛ս Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս պատմաբանութեան տանն Աղուանից, «Արարատ», 1897, մարտ):

22 Պարսից Խոսրով Անուշիրուան արքային Կասրէ կամ Կասրա եմ կոչում վրացական ու արաբական սկզբնաղբիւրները (տե՛ս Леонтий Мровели, Жизнь Карталийских царей, - http://www.vostlit.info/Texts/rus8/Mroveli/text.phtml?id=959, 176 ص ۱۹۴۸، القاهرة، ۱-۲، مروج الذهب و معادن الجواهر، (مسعودي):

23 Տե՛ս Вахушти Багратиони, Գ. 2, աշխ., էջ 127:

24 Ծանարների երկիրը տարածում էր Թերեք գետի ակունքների եւ հարեւան շրջաններում (տե՛ս Երեմեան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երեւան, 1963, էջ 56):

25 Նոյնական էր ներկայիս Կաբալա գիւղին (Չուխուր Կաբալա), որը գտնուում է Նիջ գիւղի մօտակայքում (Անյն տեղում, էջ 58):

26 مسعودي، էջ 204-205:

27 Տե՛ս Abū 'L-Kasim Ibn Haukal al-Nasībī, Kitāb surāṭ al-ard-Bibliotheca geographorum arabicorum, editio III, p. II, Lugd. Bat., 1967, էջ 354:

28 Տե՛ս Թովմայ Արծրունի եւ Անանու, էջ 296-298:

29 Буниятов З., Азербайджан в VII-IX вв., Баку, 1965, էջ 187:

30 Տե՛ս Карта Кавказского края с показанием густоты армянского населения.

31 Տե՛ս Буниятов З., Գ. 2, աշխ., էջ 187:

32 Բաղդը համանուն երկրի կենտրոնն էր: Այն գտնուում էր Մեծ Հայքի Փայտակարան աշխարհի տարածքում եւ Արցախի սահմանակցում էր Երասխ գետով (տե՛ս Jacut's Geographisches Wörterbuch aus den Handschriften zu Berlin, St. Petersburg und Paris herausgegeben von Ferdinand Wýstenfeld, Leipzig, 1924, I, էջ 529-530, مسعودي، էջ 206, տե՛ս Ասեւ Եղիազարեան Ա., Արմինիա ուստիկանութիւնը (պատմա-աշխարհագրական ուսումնասիրութիւն), պատմ. գիտ. թեկնածուի գիտ. աստիճանի հայցման ատենախօսութեան սեղմագիր, Երեւան, 2006, էջ 15): Բաղդ քաղաքը գտնուում էր Հաշտուսար լեռան լանջին (տե՛ս ابن الجبير، V, էջ 217-218, 237-238):

33 Ջ. Բուսիաթովը նշում է, որ Ծաքի գիւղում ինքն ամրոցի պարիսպներ է «յայտնաբերել» (տե՛ս Буниятов З., Գ. 2, աշխ., էջ 187):

34 Նոյն տեղում, էջ 186-188:

35 Տե՛ս Օտար աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին, 16, «Արարական աղբիւրներ», Գ, Արար մատենագիրներ, Թ-Ժ դարեր, Անթուրի-

Կ. Թուճանովը Սահլ Սմբատեանին համարում է Զառմիհր Առանշահիկի սերունդներից⁵⁴:

Դեռևս Ա. Մնացականեանը ցոյց է տուել, որ Զ. Բուճիաթովը, փորձելով Սահլին ոչ հայկական ծագում վերագրել, հակասութեան մէջ է մտնում իր իսկ կողմից իր աշխատութեան յաւելուածում տպագրուած մի շարք վաւերագրերի եւ վկայութիւնների այն տեղեկութիւնների հետ, որոնք ուղղակիորէն մատնանշում են Սահլի հայ լինելը⁵⁵:

Վ. Մինորսկին մերժում է Սահլի Առանշահիկ լինելու տեսակէտը եւ նրան կապում Տարօնի Բագրատունիների հետ⁵⁶:

Պէտք է նշել, որ Սահլի Շաքիի տէր լինելու ուսումնասիրողների կարծիքին դէմ է նաեւ Բ. Ուլուբաբեանը: Նա սկզբնաղբերների այն միակ վկայութիւնը, որտեղ Սահլը հանդէս է գալիս որպէս Շաքիի տէր⁵⁷, համարում է մատենագրական թիւրիմացութիւն⁵⁸, որի վրայ էլ խարսխուած է Ն. Աղոնցի այն վարկածը, թէ

Սահլն իրականում Բագրատունեաց տոհմի ներկայացուցիչ է եղել եւ Շաքիի իշխան⁵⁹:

Ն. Աղոնցի եզրակացութիւնն ու այն ապացուցելու համար կատարուած քննութիւնը տրամաբանական են: Եթէ Շաքիում հաստատուել են երեք Բագրատունի եղբայրներ, ուստի մի քանի տասնամեակ անց Շաքիի տէրը հանդիսացող իշխանը նոյնպէս պէտք է Բագրատունի լինէր, մանաւանդ որ Աղուանից թագաւորութիւնը «վերականգնող» Համամին կարելի է վերագրել Մխիթար Այրիւանեցու այն հաղորդումը, որտեղ մի ոմն Համամ անուանուած է Յովհաննէս Բագրատունի⁶⁰: Բացի այդ, եթէ Շաքիի տէրը Սմբատի որդի Սահլն է, որին Դասխուրանցին անուանում է Առանշահիկ, ապա նրա հայրանունն անգամ յուշում է նրա տոհմը, քանզի Սմբատ անունը մեծ տարածում ունէր Բագրատունեաց մէջ, իսկ միւս իշխանական տներում այն հազուադէպ էր հանդի-

59 Անուանի հայագէտը յենում է Մարկուարտի՝ հայ Բագրատունիների ճիւղագրութեան վերաբերեալ աշխատութեան վրայ (տե՛ս Լ. Մարկուարտ, Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը, ծանօթութիւններով, գերմաներէնից թարգմանեց Լ. Հապոգեան, Վիեննա, 1913): Ն. Արոնցին այս հարցում լիովին համամիտ է նաեւ Ս. Բարխուդարեանը (տե՛ս Արցախի, Շաքիի եւ Փառխոսի իշխանութիւնները IX-X դարերում, ՊԲՀ, 1971, թիւ 1, էջ 58-72):

60 Տե՛ս Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն Հայոց: Ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մուկուս, 1860, էջ 55: Սակայն, հարկ ենք համարում ընդգծել, որ այս Համամը, ամենայն հաւանականութեամբ, այսպէս կոչուած, Աղուանից թագաւորութեան «վերականգնողը» չէ, քանի որ Մխիթար Այրիվանեցին «Համամ, որ եւ Յովհաննէս Բագրատունի» արտայայտութիւնից յետոյ ասելուցնում է, որ նա «մեկնեաց գառակս եւ եղ զվերջի գութոյսսն ի գլոյս սաղմոսացս»: Այս տեղեկութիւնը հաստատում է նաեւ վարդապետը. «Յատուրս սորա (հայոց Աշոտ թագաւորի - Ա. Ե.) էր Համամ, որ գրեաց մեկնութիւն Առակացն եւ Քերակահիմ» (վարդապետ, էջ 91): Բ. Ուլուբաբեանը ճիշտ ձեւով տարբերակում է երկու Համամներին (տե՛ս Ուլուբաբեան Բ., ԳՁ, աշխ., էջ 78-79):

Անրիկ վերագրում է նաեւ Բ. Ուլուբաբեանը (ըստ նրա՝ տոհմագում Արմիհրական էր եւ ոչ թէ Զարմիրական), բայց այլ հայեցակէտից: Քանի որ, ինչպէս վերեւում տեսանք, հեղինակն համոզուած էր, թէ եղել է Արմիհր անուանով Առանշահիկ իշխան, ուստի եւ նրա սերունդները (Առանշահիկները) կարող էին կոչուել Արմիհրական: Իսկ ինչ վերաբերում է «յարքայից Զարմիրական տոհմէն» արտայայտութեանը, ապա յայտնի է, որ Առանշահիկները նախկինում թագաւորել են (տե՛ս Ուլուբաբեան Բ., ԳՁ, աշխ., էջ 69):

54 Cyril Toumanoff, *Studies in Christian Caucasian history*, Georgetown University Press, 1963, pp. 257-258.

55 Տե՛ս Մնացականեան Ա., *Աղուանից աշխարհի գրականութեան հարցերի շուրջ*, Երեւան, 1966, էջ 83:

56 Տե՛ս V. Minorsky, *Sahl ibn Sunbat of Shakki and Arran*, -BSOAS, 1953, XV/3, էջ 155, 506-509:

57 Տե՛ս Թովմայ Արծրունի եւ Անանուն, էջ 298:

58 Տե՛ս Ուլուբաբեան Բ., ԳՁ, աշխ., էջ 70:

պում⁶¹: Նոյն կարծիքը յայտնում է նաեւ Մ. Լորդկիպանիձէն⁶²:

Գալով սկզբնապէս Խաչէնի իշխան հանդիսացող Սահլին⁶³ վերագրուող Շաքիին՝ նշենք, որ կասկածից վեր է, որ այն նոյնական է այժմեան Շաքի-Նուխիին, որտեղ Սահլից յետոյ իշխում էին նրա սերունդները: Նրանց էին պատկանում, ինչպէս կը համոզուենք ստորեւ, նաեւ Հերթն ու Կամբեճանը: Վերջինը, ըստ «Աշխարհացոյցի», մտնում էր Աղուանք կոչուած երկրամասի մէջ, որը Մեծ Հայքին սահմանակցում էր Կուր գետով⁶⁴: Կամբեճան գաւառի տարածքը նոյնական էր ներկայիս Շիրակի դաշտավայրին⁶⁵: Շաքի քաղաքը նոյնական է ներկայիս Շաքի կամ Նուխի քաղաքին, իսկ Շաքի գաւառը՝ Շաքիի կամ Նուխի շրջանին⁶⁶:

Բ. Ուլուբաբեանը, ինչպէս տեսանք, այն կարծիքին է, թէ այն միակ վկայութիւնը, որտեղ Սահլը յիշուած է որպէս Շաքիի տէր, սոսկ թիւրիմացութիւն է: Այդ կարծիքին նրան մղում են հայ եւ արաբ մատենագիրների տեղեկութիւնները, որոնք Սահլի կեանքն ու գործունէութիւնը կապում են կուր-երասխեան միջագետքի հետ⁶⁷: Բայց ուսումնասիրողը նաեւ իրաւացիորէն համոզուած է, որ Շաքիում թագաւորողների տոհմը սերում էր Սահլից, ո-

րի թոռ Համամը, որը «զկործանեալ թագաւորութիւն տանս Աղուանից նորոգեաց», վերատիրել էր Կամբեճանին ու Շաքիին, քանի որ նախկինում Հայոց Արեւելից կողմերի իշխանները տիրում էին Կամբեճանին⁶⁸: Համամից յետոյ Կամբեճանի ու Շաքիի հատուածում իշխում էր նրա որդին՝ Ատրնբրեսէր⁶⁹: Ահա՛ այս Շաքին է միայն, որ այնքան յաճախ յիշատակուած են արաբ հեղինակները եւ որի տէրը Սահլն էր՝ ըստ թովմայ Արծրունու:

Հարագատ մնալով Հայոց Արեւելից կողմերի պատմիչի տեղեկութիւններին՝ նշենք, որ Սահլն իրականում Առանշահիկ (կամ Եռանշահիկ) է եղել, իսկ Բագրատունի տոհմանունը նրան տրուել է՝ լուր վրացական աղբիւրների տեղեկութիւնների հիման վրայ: Մեր կարծիքով, «Քարթլիս ցխովրեբա»-ի եւ Վախուշտու վերոյիշեալ տեղեկութիւնները պէտք է, որ քաղաքական նպատակադրուածութեան արդիւնք լինեն՝ ուղղուած վրացական Բագրատունիների՝ Շաքիին տիրելը պատմականորէն հիմնաւորելուն: Վրաց մատենագիրները, տեղեկ լինելով 774-775 թթ. ապստամբութիւնից յետոյ Հայ Բագրատունիների ճիւղի՝ Կղարջքում հաստատուելու փաստին, նման մի բան էլ Շաքիի համար են հնարել⁷⁰՝ ցոյց տալու համար ինչպէս Գուգարքի, այնպէս էլ Շաքիի պատկանելութիւնը վրաց Բագրատունիներին: Իսկ Շաքիում հաստատուածների գաղթի ժամանակն էլ Վախուշտին յարմարեցրել է Կղարջքում Բագրատունիների հաստատուելու ժամանակի հետ՝ ապացուցելու,

61 Տե՛ս Աղոնց Ն., ԳՁ, աշխ., էջ 125-128:
62 Տե՛ս Лордкипанидзе М., ԳՁ, աշխ., էջ 273-274:
63 Տե՛ս Մովսէս Կաղանկատուացի, էջ 326, 340. տե՛ս նաեւ Ուլուբաբեան Բ., ԳՁ, աշխ., էջ 64:
64 Տե՛ս Աշխարհացոյց Մովսէսի խորհրդագրոյ յաւելուածովը նախնեաց, հրատ. Ա. Սուքրեան, Վեներտիկ, 1881, էջ 28-29. «Աշխարհ Աղբանիս, այսինքն Աղուանք... մինչեւ ցՀայոց սահմանս, առ Կուր գետով»:
65 Տե՛ս Երեմեան Ա., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 57:
66 Տե՛ս Երեմեան Ա., ԳՁ, աշխ., էջ 73. տե՛ս նաեւ Минорский В., *История Ширвана и Дербенда IX-XI вв.*, Москва, 1963, էջ 116:
67 Տե՛ս Ուլուբաբեան Բ., ԳՁ, աշխ., էջ 70-71:

68 Տե՛ս Ուլուբաբեան Բ., *Դրուագներ Հայոց արեւելից կողմանց պատմութեան*, Երեւան, 1981, էջ 246:
69 Տե՛ս Ուլուբաբեան Բ., *Խաչէնի իշխանութիւնը...*, էջ 82:
70 Հնարարը է նաեւ, որ, իրօք, Ը դ. վերջին Հերթում Բագրատունիներ են հաստատուել, բայց հետագայում արաբներն այն յանձնել են Սահլ Սմբատեանին:

այս կամ այն իշխանական տոհմին պատկանելու խնդիրն ուսումնասիրողները լուծել են՝ նրան այս կամ այն անձին նույնացնելու միջոցով: Սկզբից ելելով լուսաբանենք մի կնճռոտ խնդիր: Համամին թագաւոր է կոչում միայն Մովսէս Դասխուրանցին⁸⁶, իսկ Յովհաննէս Դրասխանակերտցին Հայոց Սմբատ Ա Բագրատունի արքայի օրօք (890-914) նրան անուանում է «մեծ իշխանն արեւելից Համամ», որը Հայոց թագաւորի հրամանով գնում է բանակցելու արաբների հետ՝ Հայոց կաթողիկոսին գերութիւնից ազատելու նպատակով⁸⁷: Անշուշտ, Յովհաննէս Դրասխանակերտցին, Համամին «արեւելից մեծ իշխան» կոչելով, նկատի ունի նրա կարգավիճակը Հայոց թագաւորութեան համակարգում, քանի որ Սմբատ Ա-ի թագաւորութեան սահմանները տարածւում էին մինչեւ Կովկասեան լեռներն ու Ալանաց դուռը՝ ընդգրկելով թէ՛ Վիրքը եւ թէ՛ Աղուանք կոչուած երկրամասը⁸⁸: Անկաս-

կած, «արեւելից մեծ իշխան»-ը Հայոց թագաւորութեան համակարգում հանդէս էր գալիս որպէս այդ թագաւորութեան արեւելեան հատուածի իշխան: Համամի որդի Ատրնբրսեհին Յովհաննէս Դրասխանակերտցին կոչում է «թագաւորն Ատրնբրսեհ»⁸⁹: Ստեփաննոս Օրբէլեանը հաւաստում է, որ երբ ստեղծուեց Արծրունիների թագաւորութիւնը (908 թ.), այնուհետեւ Հայոց թագաւորից թագ ստացաւ Կղարջբի (Վրաց կոչուած) Ատրնբրսեհ Բագրատունի իշխանը, որից յետոյ «թագ կապեաց եւ Աղուանին Համամ»⁹⁰: Ատրնբրսեհի որդի իշխանակին Իբն Հաուկալն անուանում է «սահիբ Իշխանիկ», այսինքն՝ «իշխան իշխանիկ»⁹¹: Կարծում ենք, որ Համամի իշխանութիւնը, հանդիսանալով Հայոց թագաւորութեան մաս, իսկ Համամը՝ գտնուելով Սմբատ արքայի գերիշխանութեան ներքոյ ու հանդիսանալով Հայոց թագաւորութեան «արեւելից մեծ իշխան», անշուշտ, «Աղուանից» թագաւոր կոչուել չէր կարող: Սակայն, երբ Սմբատը թագաւորական թագ շնորհեց Կղարջբի Ատրնբրսեհ իշխանին⁹², թերեւս, նոյն ժամանակ էլ Համամին ճանաչեց որպէս «Աղուանից» թագաւոր: Ուստի, ամենայն հաւանականութեամբ, Մովսէս Դասխուրանցու այն պնդումը, թէ իբր Համամը «վերականգնել» է Աղուանից թագաւորութիւնը Աշոտ Ա-ի հետ միաժամանակ, թերեւս, պատմիչի ստեղծագործութիւնն է: Այդ պնդումը հակասում է միւս Հայ պատմիչների եւ, յատ-

86 Տե՛ս Մովսէս Կաղանկատուացի, էջ 335: Համամին թագաւոր է կոչում Աստղիկը (տե՛ս Ստեփանոսի Տարոնեցոյ Աստղիկան Պատմութիւն տիեզերական, հրատ. Ստ Մայիսաւեանց, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 161), սակայն ակնյայտ է, որ պատմիչի մօտ շփոթ կայ աւելի վաղ եւ ուշ ժամանակների իրողութիւնների միջեւ: Նրա պատմութեան համապատասխան գլխում յիշատակութիւն կայ հայոց կաթողիկոս եւ պատմագիր Յովհաննէս Դրասխանակերտցու մասին, այսինքն՝ Աս, աճուշտ, ծանօթ է եղել Աշեղի պաշտօնի ժամանակակից պատմիչի երկասիրութեանը, որում Համամը յիշատակուած է որպէս «Արեւելից մեծ իշխան»:

87 Տե՛ս Յովհաննէս Դրասխանակերտցի, էջ 174:

88 Նոյն տեղում, էջ 142, 164, Պատմութիւն Օսպիոյ Բագրատունոյ, ի յոյս ածին Գ. Տէր-Մկրտչեան եւ Մեսրոպ եպիսկոպոս, Էջմիածին, 1921, էջ 65, 72 եւ այլք: Հայ մատենագիրները հաւաստում են, որ Սմբատ Ա-ի, ինչպէս եւ նրա հօր ու նախորդի՝ Աշոտ թագաւորի իշխանութեան տակ էին գտնուում թէ՛ Վիրքը եւ թէ՛ Աղուանքը, սակայն հայոց թագաւորին Արաքս կոչում են «թագաւոր Հայոց եւ Վրաց» (նոյն տեղում, էջ 67. Աստղիկ, էջ 161. Թովմայ Արծրունի եւ Անանու, էջ 366): Անկասկած, «թագաւոր Հայոց եւ Վրաց»

ասելով, հայ պատմիչները Ակատի ունեն Սմբատի՝ հայադասանների եւ վրացադասանների վրայ թագաւորելը, իսկ Աղուանքի բնակչութիւնը հայկական էր եւ հայադասան, ուստի՝ չի յիշատակուում:

89 Յովհաննէս Դրասխանակերտցի, էջ 220:

90 Ստեփանոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց Պատմութիւն Ասիական Սիւնիայի, 1910, էջ 299:

91 Տե՛ս Ibn Haukal, էջ 354:

92 Տե՛ս Յովհաննէս Դրասխանակերտցի, էջ 188:

կապէս, այդ դէպքերի ժամանակակից Յովհաննէս Դրասխանակերտցու տեղեկութիւններին, ըստ որոնց, ինչպէս տեսանք, Սմբատ Ա-ի օրօք Համամը սկզբում դեռեւս թագաւոր չէր եւ Հայոց թագաւորից թագ էր ստացել Կղարջբի Ատրնբրսեհ իշխանից յետոյ: Դա տեղի է ունեցել 908-909 թթ. ընթացքում՝ Վասպուրականի Գագիկ թագաւորի թագադրութեան եւ դէպի Հայաստան Ատրպատականի Իւսուֆ ամիրայի կատարած արշաւանքի միջեւ: Քանի որ Համամի որդի Ատրնբրսեհը, ըստ Վախուշտու, սկզբում թագաւոր լինելով, հետագայում վախենում էր իրեն այդպէս կոչել, նոյն կարգավիճակը պահպանում էր նաեւ նրա որդի իշխանակը՝ կոչուելով իշխան, չնայած, որ Անանիա Մոկացին նրան թագաւոր է կոչում⁹³: Փաստօրէն, խօսք անգամ լինել չի կարող այն մասին, որ Համամը վերականգնել է Աղուանից թագաւորութիւնը: Նա, հանդիսանալով Հայոց թագաւորութեան «արեւելից մեծ իշխան», թագ է ստացել Սմբատ Ա թագաւորից՝ ճանաչելով նրա իշխանութիւնը:

Ն. Աղունցը, որ Սահլին Բագրատունի էր համարում, նրա որդի Յովհաննէսին նոյնացնում է միւս որդի Մուաւիանին ու, քանի որ կայ նաեւ Միւթար Այրիվանեցու «Համամ, որ եւ Յովհաննէս Բագրատունի»՝ հաղորդումը, իսկ ուսումնասիրողը, յանձնիս այս Համամի, տեսնում է Աղուանից թագաւորութիւնը «վերականգնողին», ուստի եւ ծնւում է ուսումնասիրողի այն կարծիքը, թէ Յովհաննէս-Մուաւիան նոյն ինքն էր Համամն է: Սակայն, Ն. Աղունցն անհավանական է համարում եռակի անուանակոչումը եւ «Մուաւիա» անունը համարում «Համամ» անունն աղաւաղումը⁹⁴: Մուաւիա-Յովհաննէս նոյնացումն ընդու-

նում է նաեւ Բ. Ուլուբաբեանը, սակայն, նա դէմ է յիշեալ անուանումները կրողի, որը Սահլի որդին էր, եւ Համամի նոյնացմանը: Համամին նա նոյնական է համարում Սահլի թոռանը՝ Ատրնբրսեհի որդի Գրիգորին⁹⁵: Քանի որ Սահլը, ըստ Բ. Ուլուբաբեանի, Առանշահիկ էր, ուստի Առանշահիկ էր նաեւ Համամ-Գրիգորը: Բ. Ուլուբաբեանը նշում է, որ, իբր, ըստ Մովսէս Դասխուրանցու՝ Համամն ու Գրիգորը նոյն անձն են: Համաձայն նրա՝ պատմիչի տեղեկութիւններից հետեւում է, թէ ինչպէս Ատրնբրսեհի որդին ու Սահլի թոռն էր Գրիգորը, այնպէս էլ Ատրնբրսեհի որդին ու Սահլի թոռն էր նաեւ Համամը: Ընդգծենք սակայն, որ Հայոց Արեւելից կողմերի պատմիչի վկայութիւնը Ատրնբրսեհի որդի եւ Սահլի թոռ է ճանաչում միայն Գրիգորին, իսկ Համամի մասին նման տեղեկութիւն չի հաղորդում⁹⁶:

Անդրադառնանք ուսումնասիրողների ուշադրութիւնից դուրս մնացած մի կարեւոր իրողութեան: Յայտնի է, որ Սահլը Բաբեկին ձերբակալելուց ու արաբներին յանձնելուց յետոյ խալիֆայից ստացել էր իշխանութիւնն «ի վերայ Հայոց, Վրաց եւ Աղուանից»: Իբն ալ Ասիրը հաղորդում է, որ արաբները Բաբեկին ձերբակալելու համար Սահլին տուել են պատրիկի կոչում⁹⁷, ինչը խօսում է Մովսէս Դասխուրանցու

93 Տե՛ս Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս պատմութեան տանն Աղուանից, «Արարատ», 1897, մարտ, էջ 144:

94 Տե՛ս Աղունց Ն., Աշխ., էջ 129-130:

95 Տե՛ս Ուլուբաբեան Բ., Խաչէնի իշխանութիւնը... էջ 75-77: Բ. Ուլուբաբեանը, հետեւելով Ա. Կրիմսկուն, Համամ անունը պարզապէս դիտում է որպէս Գրիգորի արաբերէն թարգմանութիւն: Գրիգոր մկրտչական անունը (որը Առանակում է արթուն, զգօն, հոգատար) թարգմանուել է այն ժամանակ տարածուած արաբական Համամի, որը նոյն արմատն ունի՝ լինել զգօն, հոգատար (տե՛ս Крымский А., Страницы из истории северного или кавказского Азербайджана (классической Албании). Шекни, -տե՛ս Сборник «Памяти академика Н. Я. Марра (1864-1934)», М.-Л., 1938, էջ 374, ծանօթ. 6):

96 Տե՛ս Մովսէս Կաղանկատուացի, էջ 340-341:

97 Տե՛ս ابن الاثير, V, էջ 245:

յիշեալ հաղորդման օգտին: Սահլի որդին էր, թերեւս, «տէրանց տէրն Յովհաննէս», որ Հայոց, Վրաց եւ Աղուանից եղեւ տէր: Եթէ նա էր «տերանց տէր»-ն ու հօրից «Հայոց, Վրաց եւ Աղուանից» իշխանութեան ժառանգորդը, ուրեմն եւ նա էր որդիներից աւագն ու հօր ուղղակի ժառանգորդը: Սրան է վերաբերում Մեծարանց Սուրբ Յակովբի վանքի այն արձանագրութիւնը, որտեղ յիշուած է մի ոմն Յովհաննէս. «ՅԲ (853 թ. - Ա. Ե.) թուականութեան <ա>» Հայոյ <ց> ի ժամանակ Յովանիսի Աղուան <ից> իշխանի եւ Սողոմ <ոն> Մեծարանց եպիսկոպոս <ոպոս> կանգնեցի զ<սուրբ>...»⁹⁸: Այս Յովհաննէսին, ինչպէս տեսանք, ուսումնասիրողներն հակուած են նոյնացնելու Սահլի Մուսաի անունով միւս որդուն, որն, ըստ իբն ալ Ասիրի՝ հետագայում հօր հետ գերեզմարուեց⁹⁹: Պէտք է նշել, որ Թովմայ Արծրունին հաւաստում է, որ Սահլի հետ գերի էր տարուել նրա որդի Ատրներսեհը¹⁰⁰: Ի հակադրութիւն յիշեալ տեսակէտների՝ մենք կարծում ենք, որ իրականում Յովհաննէսի ու Մուսաիայի նոյնացումը սխալ է, որ դրանք տարբեր մարդիկ են: Ուրեմն՝ պէտք է, որ Սահլը երեք որդի ունեցած լինի, որոնցից Ատրներսեհն ու Մուսաիան հօր հետ տարուել են Սամառա: Աւելին, եթէ համեմատենք իբն ալ Ասիրի հաղորդումը Թովմայ Արծրունու վկայութեան հետ, ապա կը տեսնենք, որ նրանցից իւրաքանչիւրը վկայում է, որ Սահլի հետ գերութեան է տարուել նրա միայն մէկ որդին: Ըստ առաջինի, դա Մուսաիան է, իսկ, ըստ երկրորդի՝ Ատրներսեհը: Ուստի առաւել հաւանական է (եթէ, իհարկէ, Սահլի՝ երեք որդիներ ունենալու մեր վերը բերուած կարծիքը կասկածելի է) Ատրներսե-

98 Տե՛ս Աղոնց Ն., Գ. 2. աշխ., էջ 129:
 99 Տե՛ս ابن الاثير, V, էջ 292:
 100 Տե՛ս Թովմայ Արծրունի եւ Անանուհի, էջ 296-298:

հի ու Մուսաիայի նոյնացումը, մանաւանդ, որ Թովմայի «Ատրներսեհ Աղուանից իշխան»-ին համապատասխանում է իբն ալ Ասիրի «Առանի պատրիկ Մուսաի»-ն: «Աղուանից» իշխան Ատրներսեհը Սահլի որդին է: Իսկ եթէ Թ. 50-ական թթ. սկզբներին հօր կենդանութեան օրօք նա էր «Աղուանից» իշխանը, ուստի եւ Սահլի՝ Շաքիի տէր լինելու մասին վկայութեանը պէտք է լրջօրէն վերաբերուել, մանաւանդ, որ հօր ժառանգորդը, ինչպէս տեսանք, նրա Յովհաննէս որդին է եղել, որը, չնայած իր բարձրագոյն կոչմանը, այլեւս չի յիշատակուած: Հաւանական է, որ նա հօր հետ հաստատուած լինէր Շաքիում, այն բանից յետոյ, երբ նրա հայրը խալիֆայից ստացել էր իշխանութիւնն «ի վերայ Հայոց, Վրաց եւ Աղուանից»: Չարգացնելով մեր տեսակէտը՝ նշենք, որ հաւանական է նաեւ, որ Սահլին «ի վերայ Հայոց, Վրաց եւ Աղուանից» իշխանութիւն տալն իրենից ներկայացնէր հետեւեալը. «Հայոց»-ը Հայոց Արեւելից կողմերն են, «Աղուանից»-ը՝ Աղուանքի տարածքում արդէն գոյութիւն ունեցող եւ նախկինում էլ Հայոց Արեւելից կողմերի իշխանութեանը ենթակայ Շաքիի եւ Կամբեհանի իշխանութիւնը¹⁰¹, որտեղ բնակ-

101 Շաքին ու Կամբեհանը դեռեւս է՝ դ. կեսերին հանդէս էին գալիս որպէս մէկ իշխանութիւն: Սալման իբն Ռաքիայի արշաւանքի ժամանակ Բալազորին յիշատակում է Շաքիի ու Կամբեհանի իշխանին, որը հարկ վճարելու պայմանով խաղաղութեան պայմանագիր է կնքում արաբ զօրավարի հետ (տե՛ս بلذري, I 240): Շաքիի ու Կամբեհանի տէրը, ըստ երեւոյթի, ենթարկւում էր Հայոց Արեւելից կողմերի իշխան Ջուանշեհին (637-683), երբ, ըստ Կաղանկատուացու, Կամբեհանը (ուրեմն նաեւ՝ Շաքին) նրա իշխանութեան կազմի մէջ էր մտնում: Դա երեւում է Մովսէս Կաղանկատուացու այն յիշատակութիւնից, որտեղ պատմիչը, նկարագրելով պարսից զօրաշնորհի կատարած յարձակումը, տեղեկացնում է, որ Ջուանշեհը «դառնացեալ անպով անցանէր գհայրեհի վիճակին իր սահմանս յայնկոյս գետոյն Կուրայ ի Կասիհանն գաւառ եւ անդ դէր ընդ նուս ոչ վարկպարս-

չութիւնը հայկական էր¹⁰², իսկ «Վրաց»-ը՝ Հերեթը¹⁰³, որը, ինչպէս տեսանք, հայադաւան էր եւ սկսած գոնէ Խոսրով Անուշիրուանի ժամանակներից էապէս հայաբնակ, եւ հետագայում էլ Աղուանից թագաւորութեան մաս էր կազմում: Ուստի, եթէ Թովման որպէս «Աղուանից» իշխան է յիշատակում (այս «Աղուանից» անուն տակ Թովման նկատի ունի Հայոց Արեւելից կողմերը) Սահլի որդի Ատրներսեհին, ապա Սահլն էլ իշխելու էր խալիֆայից ստացած իշխանութեան միւս հատուածում, այն է՝ Շաքիում, Կամբեհանում ու Հերեթում, սակայն՝ պահպանելով գերագոյն իշխանապետութիւնը: Իսկ Յովհաննէսը՝ հօր անմիջական ժառանգորդը, առանց կասկածի, նրա կողքին պէտք է գտնուէր: Այս դէպքում առաջ է գալիս նաեւ Համամ Բարեպաշտի հարցը: Ինչպէս վերեւում տեսանք, ուսումնասիրողները Համամի հարցը լուծել են՝ նրան այս կամ այն անձին նոյնացնելով: Մեր տեսակէտի ճիշտ լինելու դէպքում Համամին հարկ չկայ նոյնացնելու ո՛չ Սահլի Յովհաննէս որդուն, որը սխալ է հէնց թէկուզ ժամանակների ակնյայտ անհամապատասխանութեան պատճառով¹⁰⁴, ո՛չ էլ Ատրներսեհի Գրիգոր որդուն: Համամը, պէտք է որ, Յովհաննէսի որդին եղած լինէր:

գի, այլ խոհականապէս դէմ առ դէմ ուսումնասիրութեամբ» (Մովսէս Կաղանկատուացի, էջ 177-178):
 102 Տե՛ս Եղիազարեան Ա., Արմինիա ուստիկանութիւնը..., էջ 40-42, 140-141:
 103 Նշում ենք բուն Հերեթ, քանի որ վրացական աղբիւրներն այդ գաւառի անունը հետագայում տարածում էին ողջ, այսպէս կոչուած, Աղուանից թագաւորութեան վրայ:
 104 Յովհաննէսը «Հայոց, Վրաց եւ Աղուանից» իշխան էր դարձել, ըստ Կաղանկատուացու, 838 թ. (տե՛ս Մովսէս Կաղանկատուացի, էջ 330-331), իսկ Համամը, նոյն հեղինակի վկայութեամբ, այսպէս կոչուած, Աղուանից թագաւորութիւնը վերականգնել է հայոց Աշոտ իշխանաց իշխանի հետ միաժամանակ, այսինքն՝ նոյն դարի 80-ական թթ. (նոյն տեղում, էջ 335):

Բ. Ուլուբաբեանն Առանշահիկ իշխանների՝ Շաքիին տիրելու (ըստ նրա՝ վերատիրելու) պատիւը տալիս է Համամ Բարեպաշտին՝ յենուելով Դասխուբանցու այն հաղորդման վրայ, թէ «Գրիգոր (ըստ ուսումնասիրողի՝ նոյն ինքը՝ Համամ Բարեպաշտը - Ա. Ե.) շինէ զհաւախաղացին բերդն, եւ յայն կողմն ձգէ զձեռն իւր իշխանութեանն»¹⁰⁵: Նա, հետեւելով Ա. Կրիմսկուն¹⁰⁶, «յայն կողմ»-ը համարում է Կուրի ձախափնեակը, քանի որ պատմող հեղինակը աջափնեակից է¹⁰⁷: Մեր քննութիւնը, սակայն, ցոյց տուեց, որ Առանշահիկները հաստատուել էին Շաքիում Սահլի ժամանակներից սկսած: Բացի այդ, Բ. Ուլուբաբեանը, ապացուցելու համար Ատրներսեհի որդի Գրիգորի նոյնութիւնը Համամ Բարեպաշտին, վկայակոչում է Գրիգորի թողած արձանագրութիւնը՝ գտնուած Սողբի Մեծ Մազրա գիւղից, որը բարբառում է, թէ Գրիգորը «Սիւնեաց եւ Աղուանից» իշխան է եղել¹⁰⁸: Ուստի ուրիշ էլ ո՞վ, եթէ ոչ նա, պէտք է «գլործանեալ թագաւորութիւն տանն Աղուանից» նորոգէր: Երբ արաբները Սահլին իր որդի Ատրներսեհի հետ գերեցին, վերջինիս ողջ իշխանութիւնն անցաւ որդուն՝ Գրիգորին: Իսկ ի՞նչ եղաւ Յովհաննէսի ճիւղը: Նա չէր գերուել, բայց այլեւս չի յիշատակուած: Եւ եթէ նա, որպէս հօր անմիջական ժառանգ, գտնուած էր Շաքիում, ուրեմն եւ

105 Մովսէս Կաղանկատուացի, էջ 340-341:
 106 Տե՛ս Крымский А., Գ. 2. աշխ., էջ 375:
 107 Տե՛ս Ուլուբաբեան Բ., Խաչէնի իշխանութիւնը..., էջ 75:
 108 Նոյն տեղում: Բ. Ուլուբաբեանը «Սիւնեաց»-ը սրբագրում է «Փոքր Սիւնիք»-ի: Այս ճշտումն անհիմն է, քանի որ արձանագրութեան մէջ Սիւնիք աշխարհը յստակօրէն տարանջատում է «Աղուանից» տեղանունից, որի տակ նկատի ունի Արցախ եւ Ոսիք նահանգները: Իսկ Փոքր Սիւնիքը Արցախն է (տե՛ս Մովսէսի Խորենացու Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Մ. Արեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Երեւան, 1981, էջ 310):

Աղուանից թագաւորութեան վերականգնման պատիւն էլ պէտք է նրա սերունդներին պատկանէր: Այսինքն՝ Համամն, անկասկած, նրա՝ որդին էր: Համամի, ինչպէս նաեւ նրա որդի Ատրնեքսէի թագաւորանիստը Շաքին էր, ինչպէս վկայում են Յովհաննէս Դրասխանակերտցին ու Մասուդըն: Մեր կարծիքով, հայոց թագաւորից թագ ստացած եւ Շաքիում գտնուող Համամ Բարեպաշտը սկզբնապէս համարւում էր գերագոյն իշխան Շաքիի, Հերեթի, Կամբեճանի եւ Հայոց Արեւելից կողմերի վրայ: Յովհաննէս Դրասխանակերտցու «արեւելից մեծ իշխան» հաղորդումը վերաբերում էր յիշեալ ողջ տարածքին, որը Բագրատունի թագաւորների օրօք կազմում էր նրանց տերութեան «արեւելից» հատուածը: Սակայն Աղուանից թագաւորութիւնն իր ընդարձակ սահմանները հետագայում պահպանել չկարողացաւ ու շուտով սահմանափակուեց Կուրի ձախափնեայ հողերում: Վերը տեսանք, որ արդէն Համամի որդի Ատրնեքսէի օրօք Շաքիի թագաւորութիւնը, ըստ Մասուդու, տարածւում էր Կապադակի եւ Ծանարաց երկրի միջեւ, այսինքն՝ ընդգրկելով թէ՛ Կամբեճան ու Շաքի գաւառները եւ թէ՛ Հերեթը, չնայած, որ անուանապէս հօր գերագահ դիրքը պահպանում էր նաեւ Ատրնեքսէն, ինչն ապացուցում է Յովհաննէս կաթողիկոսի վկայութիւնը, որ ինքը հալածական «ի կողմանս արեւելեայ Աղուանից առ մեծ իշխանն Սահակ երթեալ եւ առ թագաւորն նոցունց Ատրնեքսէ»¹⁰⁹: Այսինքն՝ «Աղուանից» (իմա՝ Հայոց Արեւելից կողմեր - Ա. Ե.) մեծ իշխանի կողքին կայ նաեւ գերագահ մէկը՝ Շաքիի կամ «Աղուանից» Ատրնեքսէ թագաւորը:

Հարկ է վերջում անդրադառնալ եւս մէկ կարեւոր իրողութեան: Համամի «վերականգնած» թագաւորութիւնն «Աղուանից» են անուանում միայն հայկական աղ-

109 Յովհաննէս Դրասխանակերտցի, էջ 220:

բիւրները: Վրացական աղբիւրներն, ինչպէս տեսանք, այն Հերեթ գաւառի անունից կոչում են Հերեթի թագաւորութիւն, իսկ արաբական աղբիւրները՝ սկզբում Շաքի-Կամբեճանի իշխանութիւն¹¹⁰, իսկ յետոյ նաեւ՝ Շաքիի (իմա՝ Շաքիի - Ա. Ե.) թագաւորութիւն¹¹¹: Տեսանք, որ այդ թագաւորութեան բնակչութիւնը հայկական էր ու հայադաւան, սակայն հայկական աղբիւրներն, այնուամենայնիւ, այն կոչում են «Աղուանից»: Դատելով Մովսէս Խորենացու տուեալներից՝ «Աղուանք»-ը էթնիկական անուն չէր¹¹²: Նա սկզբում հաղորդում է, թէ ինչպէս է Վաղարշակ թագաւորը մի ոմն Առանի կարգում «նահապետ ի վերայ մեծ դաշտին Առանայ, յետոյսայ մինչեւ ցՀունարակերտ»¹¹³: Այնուհետեւ Պատմահայրը տեղեկացնում է, որ նրա ցեղը «ժառանգեաց զգաշտն Աղուանից եւ զլեռնակողմն նորին դաշտի» եւ, որ «աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Աղուանք. զի աղու ձայնէին զնա»¹¹⁴: Այսինքն՝ աղու անունը բնորոշում էր նրա քաղցր բնակութիւնը: Տարածքին տրուող Աղու+ան+ք անուանումը, անկասկած, ցոյց էր տալու դրա արգաւանդ ու բարեբեր լինելը: Իսկ, քանի որ խօսքը, ըստ Պատմահայր, դաշտի մասին է, ապա, անշուշտ, արգաւանդ ու բարեբեր էր կոչուելու Կուրի առափնեայ դաշտը: Բացի այդ, աղուան անունը չէր վերաբերում միայն մէկ ցեղի: Ստրաբոնն այդպէս է անուանում Կուր գետի եւ Կովկասեան լեռների միջեւ բնակուող 26 ցեղերի, որոնց, ճիշտ է, Ստրաբոնի ժամանակներում տիրում էր մէկ թագաւոր, բայց նախկինում դրանցից իւրաքանչիւրն իր

110 St'us Ելաճրի, I, էջ 240:
 111 مسعودي, էջ 204-205, Ibn Haukal, էջ 354:
 112 St'us Եղիազարեան Ա., Արմինիա ուստիկանութիւնը..., էջ 36-37, 137:
 113 Ստեփաննոս Օրբէլեան, էջ 16:
 114 St'us Մովսէս Խորենացի, էջ 126-128:

թագաւորն ու լեզուն ունէր¹¹⁵: Ըստ որում՝ վերջին հաղորդումը ցոյց է տալիս, որ այդ ցեղերի միջեւ նոյնիսկ ազգակցութիւն չկար: Արաբ հեղինակների հաղորդումներից երեւում է, որ Հայոց Արեւելից կողմերին տրուող Առան (իմա՝ դաշտ - Ա. Ե.)¹¹⁶ անունը¹¹⁷ երբեմն տարածւում էր նաեւ Աղուանք կոչուած երկրամասի վրայ¹¹⁸, իսկ հայկական աղբիւրները յաճախ Աղուանք տեղանունը վերագրում են թէ՛ Աղուանք կոչուած երկրամասին եւ թէ՛ Հայոց Արեւելից կողմերին: Եզրակացութիւնը պարզ է. նոյն իմաստն արտայայտող բառերի փոխառնումը միանգամայն բացատրելի ու հնարաւոր է: Ուստի՝ արձանագրենք. Կուրից հիւսիս գտնուող Աղուանք-Առանը եւ հարաւ ընկած Առան-Աղուանք-Հայոց Արեւելից կողմերը (յատկապէս՝ Ուտիք աշխարհը) հայերի շրջանում հանդէս էին գալիս «արգաւանդ երկիր», «դաշտ» նշանակութեամբ եւ այդ իմաստով հայկական միջավայրում գոյատեւեցին բաւական երկար: Նշենք նաեւ, որ չնայած Համամի հիմնած թագաւորութիւնը, դատելով վերնաստիճից, կոչուելու էր Շաքիի թագաւորութիւն, հայկական աղբիւրներն աւանդուածով այն կոչում են «Աղուանից», քանի որ այդտեղ էր գտնուել Աղուանից կամ Ալբանիա թագաւորութիւնը:

Ամփոփելով քննութեան արդիւնքները՝ նշենք, որ Սահլ Սմբատեան իշխանը եղել է հայկական Եռանշահիկ կամ Առանշահիկ իշխանական տոհմից, իշխել է Խաչէնում եւ Բաբելին ձերբակալելուց եւ արաբներին յանձնելուց յետոյ դերագոյն իշխանութիւն է ստացել Հայոց Արեւելից կողմերի եւ Շաքի-Կամբեճանի ու Հերեթի հայկական իշխանութեան վրայ: Հայոց թագաւորութեան հիմնադրումից եւ Աշոտ Ա ու Սմբատ Ա թագաւորների կողմից մինչեւ Կովկասեան լեռներն ընկած երկրների նուաճումից յետոյ այդ իշխանութիւնը դառնում է հայոց թագաւորութեան մաս եւ կոչւում Արեւելից ընդհանրական անունով՝ նկատի ունենալով Հայոց թագաւորութեան մէջ նրա աշխարհագրական եւ ռազմավարական դիրքը: Սահլի որդիներից Ատրնեքսէն իշխում էր Հայոց Արեւելից կողմերում, իսկ Շաքիում հօր կողքին գտնւում էր Յովհաննէսը: Վերջինս Սահլ Սմբատեանի ուղղակի ժառանգորդն էր: Յովհաննէսից յետոյ Համամը, ըստ էութեան, հանդիսանալով Հայոց թագաւորութեան «արեւելից մեծ իշխան», հետագայում դարձաւ Աղուանից թագաւոր:

115 St'us Страбон, География, в 17 книгах, перевод, статья и комментарии Г. Стратановского, Москва, 1964, XI, IV, 6:
 116 Մեզանում այսօր էլ Արարատեան դաշտն անուանում է Արան (Առան), իսկ տեղի բնակչութիւնը՝ արանցի (տե՛ս Երեմեան Ա., Ն. Մատր եւ VII դարի «Աշխարհացոյց»-ը, «Մատր եւ հայագիտութեան հարցերը», Երեւան, 1968, էջ 88-89):
 117 St'us Jacut, I, էջ 183-184, Ibn Khordābeh, Kitāb al-masālik wa'l-mamālik.-BGA, editio II, p. VI, Lugd. Bat., 1967, էջ 121:
 118 St'us Jacut, IV, էջ 259, Ibn Haukal, էջ 355: